**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**03.03.2026թ. կնքված N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/7**
**ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի**

ք. Մասիս «06» ապրիլի 2026թ.

Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Նորայր Հակոբյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՆՄ «ՊՐՈՋԵՔԹ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն� Պետոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 03.03.2026թ. կնքված N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/7 ծածկագրով գնման պայմանագրի 8.5 կետը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով 03.04.2026թ. զեկուցագիրը (մտից N 3717)՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաստատել 03.03.2026թ. կնքված N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/7 ծածկագրով գնման պայմանագրի լրացուցիչ աշխատանքների տեխնիկական բնութագիր-ծավալաթերթը՝ համաձայն N 1 Հավելվածի:

1.2 Հաստատել 03.03.2026թ. կնքված N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/7 ծածկագրով գնման պայմանագրի լրացուցիչ աշխատանքների վճարման ժամանակացույցը 1 678 620 (մեկ միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամի չափով՝ համաձայն N 2 Հավելվածի:

1.3 Սույն համաձայնագրով հաստատված լրացուցիչ աշխատանքների կատարման ժամկետ սահմանել համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| **Մասիսի համայնքապետարան** | **<<ՆՄ ՊՐՈՋԵՔԹ>> ՍՊԸ** |
| **ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4** | **ք. Արթիկ, Անկախության փ. 31, բն. 11** |
| **ՀՀ Ֆինանսների նախարարություն** | **«Ամերիաբանկ» ՓԲԸ** |
| **Հ/Հ 900 432 206 028** | **Հ/Հ 1570016472524700** |
| **ՀՎՀՀ 04240324** | **ՀՎՀՀ 05564118** |
| Ն. Հակոբյան__________ /ստորագրություն/ Կ.Տ | Ն� Պետոյան__________ /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 1
<<03>> մարտի 2026թ. կնքված
N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/7 ծածկագրով գնման պայմանագրի
« 06 » ապրիլի 2026թ. կնքված N 2 համաձայնագրի

## Տեխնիկական բնութագիր-ծավալաթերթ

Մասիս համայնքում առկա խաղահրապարակների բարեկարգման **լրացուցիչ** աշխատանքների կատարման միավոր գների

| **Անվանում** | **Չափի միավոր** | **Առավելագույն քանակը** | **Մասնակցի առաջարկած միավորի գինը ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ** | **Տեխնիկական բնութագիր** |
|---|---|---|---|---|
| Տարածքի բետոնապատում | քմ | 113.4 | 4000 | Իրականացնել տարածքի ձեռքով հարթեցում, խճային նախաշերտի իրականացում 5սմ հաստությամբ, ամրանային ցանց՝ պողպատե, եռակցված, BP d=5,0մմ, ԵԲ նախաշերտի պատրաստում նվազագույնը B15 դասի բետոնից 50մմ հաստությամբ: |
| Միաձույլ ռետինե հատակի պատրաստում | քմ | 113.4 | 10 800 | Հաստությունը՝ 20 մմ:<br>Գույնը՝ համաձայնեցնել պատվիրատուի հետ:<br>Նյութը՝ 90% ռետինե մանրահատիկ, կապակցիչ՝ պոլիուրեթանային սոսինձ, և պիգմենտային ներկ: Պիգմենտային ներկը օգտագործվում է ամբողջ 20մմ հաստությունը նույն գույնով ներկելու համար:<br>Խտությունը՝ 850 կգ/մ3 - 1000 կգ/մ3<br>Օգտագործման համար թույլատրելի ջերմաստիճանը՝ -60°C.....+60°C:<br>Ցրտահարության դիմադրություն. 20 ցիկլ չի փոխվում - 20°C<br>Հրդեհային անվտանգության դաս՝ V2, G2, D2, RP2, T2<br>Նյութի քայքայումը՝ 0,5 գ/սմ2<br>Առաձգական ուժ՝ 1,05-1,20 ՄՊա<br>Նյութի կարծրություն՝ 60-65 միավոր<br>Ջրակայունություն՝ ջրաթափանց, ջրակայուն, փտելու և բորբոսնելու նկատմամբ դիմացկունություն<br>Ունի գերազանց ջրաթափանցելիություն: Մակերեւույթի վրա ջրափոսեր չեն ձևավորվում: Ունի քայքայման բարձր դիմադրողականություն, մեխանիկական վնասվածքների բարձր դիմադրողականություն, վրան թույլատրելի քաշի բարձր մակարդակ:<br>Առաջարկվող հիմք. Կոշտ ենթաշերտ՝ բետոն, ասֆալտ: Ջրի հոսքի համար պահանջվում է 1-2% թեքություն:Տեղադրումը կատարվում է տարածքի փոշեզրկման և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | բետոնապատ տարածքը White Spirit կամ համարժեք նյութով մշակումից հետո: Նույն պահին պիգմենտային ներկի, ռետինե մանրահատիկի և պոլիուրթենային սոսնձի պատրաստված խառնուրդը համապատասխան տաքացվող գլանակով հարթեցվում է և խտացվում: Վերոնշյալ բոլոր հատկանիշների համար պետք է ներկայացվի Համապատասխանության հավաստագիր՝ հաստատված արտադրողի կնիքով: |
| **Ընդամենը** | | | **14 800** | **Այլ տեղեկություններ.**<br>**Աշխատանքները կատարվելու են Մասիս քաղաքի Նոթ թաղամաս թիվ 29 շենքի բակում:** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Մասիսի համայնքապետարան**
**ք. Մասիս, Կենտրոնական hր. թիվ 4**
**ՀՀ Ֆինանսների նախարարություն**
**Հ/Հ 900 432 206 028**
**ՀՎՀՀ 04240324**

Ն. Հակոբյան ____________________
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**<<ՆՄ ՊՐՈՋԵՔԹ>> ՍՊԸ**
**ք. Արթիկ, Անկախության փ. 31, բն. 11**
**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 1570016472524700**
**ՀՎՀՀ 05564118**

Ն. Պետոյան ____________________
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
<<03>> մարտի 2026թ. կնքված
N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/7 ծածկագրով գնման պայմանագրի
« 06 » ապրիլի 2026թ. կնքված N 2 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | Մասիս համայնքում առկա խաղահրապարակների բարեկարգման **լրացուցիչ** աշխատանքներ | | | | 1 678 620 | 1 678 620 | 1 678 620 | 1 678 620 | 1 678 620 | 1 678 620 | 1 678 620 | 1 678 620 | 1 678 620 | **1 678 620** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Մասիսի համայնքապետարան**
**ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4**
**ՀՀ Ֆինանսների նախարարություն**
**Հ/Հ 900 432 206 028**
**ՀՎՀՀ 04240324**

Ն. Հակոբյան____________________
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**<<ՆՄ ՊՐՈՋԵՔԹ>> ՍՊԸ**
**ք. Արթիկ, Անկախության փ. 31, բն. 11**
**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 1570016472524700**
**ՀՎՀՀ 05564118**

Ն. Պետոյան____________________
/ստորագրություն/
Կ.Տ